[redacted]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ 010 54 03 26, ֆաքս՝ 010 54 06 13
Էլ.փոստ՝ scws@scws.am
Վեբ կայք՝ scws.am

«01» 09 2022թ.

N 03/15/3837-2022

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆԻՆ
ՎԱՐԴԵՆԻՍ ՆԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոնայք

Ջրային կոմիտե է դիմել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենը՝ կապված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիս համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրների հետ (կցվում է):

Հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գրության մեջ բարձրացված խնդիրները՝ առաջարկվում է ավագանու համապատասխան որոշմամբ Մարտունի և Վարդենիս համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի գույքը սահմանված կարգով հանձնել Ջրային կոմիտեին՝ վերջինիս կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին շահագործման հանձնելու նպատակով, որը իրավական հիմք կստեղծի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Խնդրում եմ ուսումնասիրել բարձրացված հարցը և Ջրային կոմիտե ներկայացնել Ձեր դիրքորոշումը:

Առդիր՝ 1 նիշք:

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Սարիբեկ Աբազյան
Գույքի կառավարման և ներդրումների
իրականացման վարչություն
Հեռ.՝ (+374) 10-54-12-88

2704
2022թ.

VEOLIA
Ջուր

Ջրային Կոմիտեի նախագահ

Պարոն Վ. Գևորգյանին

«06» [illegible] 2022թ.

N [illegible]/15078

Առարկան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում ծագող խնդիրների և դրանց լուծման առաջարկների վերաբերյալ

Հարգելի պարոն Գևորգյան

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն Ջրային կոմիտեին բազմիցս տեղեկացրել է (մասնավորապես՝ 07.06.2021թ.-ի NԱԾ/16090 գրությամբ), որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքն ընդգրկված է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում, սակայն քաղաքի ջրային համակարգն ամբողջությամբ վարձակալության չի հանձնվել: Մասնավորապես, համայնքի ավագանու որոշմամբ Ջրային կոմիտեին (Վարձատուին) չեն փոխանցվել համայնքի սեփականությունը հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, որոնք պետք է դառնային պետական սեփականություն և այնուհետև վարձակալության հանձնվեին Ընկերությանը: Մարտունի համայնքի ղեկավարն անհիմն պատճառաբանություններով (ընկերությունից պահանջում է իրականացնել քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի ընդլայնում, նոր ջրագծերի և կոյուղագծերի կառուցում, կենտրոնական զբոսայգու շատրվանների անվճար ջրամատակարարման ապահովում և այլն, որոնք Ընկերության պայմանագրային պարտավորություններից դուրս են) առ այսօր հրաժարվում է գույքը հանձնել Ջրային կոմիտեին: Հենց դա էր պատճառը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիս համայնքների սեփականությունը հանդիսացող ջրային համակարգերը սահմանված կարգով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի վարձակալության չհանձնելու փաստն ամրագրվել է նաև Վարձակալության պայմանագրի կողմերի միջև 10.11.2021թ.-ին կնքված N24 համաձայնագրի 23-րդ կետում, որով Վարձատուն պարտավորվել է ձեռնարկել միջոցներ, մասնավորապես՝ Մարտունի և Վարդենիս համայնքների հետ կապված խնդիրները կարգավորելու և Վարձատուի սեփականությունը հանդիսացող ողջ անշարժ գույքը սահմանված կարգով վարձակալության հանձնելու գործընթացն ավարտին հասցնելու համար:

Տվյալ փաստն առաջացրել է լուրջ խոչընդոտներ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մի շարք ծրագրերի իրականացման հարցում՝ չնայած անցած ժամանակահատվածում Մարտունի համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում արդեն իսկ կատարվել են մի քանի տասնյակ միլիոն դրամի աշխատանքներ: Թեև նախատեսված է Մարտունի համայնքում իրականացնել վերակառուցման զգալի աշխատանքներ, այնուամենայնիվ դրանց թե պլանավորումը, թե իրականացումն անմիջական կախվածության մեջ են Ընկերության կողմից գույքի սահմանված կարգով վարձակալումից: Խնդրի կարգավորման համար Ջրային կոմիտեում և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում բազմիցս

ՀՀ, ք. Երևան,375025,Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ office@vjur.am

«ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
15078

RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: office@vjur.am

կազմակերպվել են համատեղ քննարկումներ, սակայն առ այսօր հարցին լուծում չի տրվել: Ավելին, Մարտունու համայնքապետարանի կողմից 09.10.2020թ.-ին տրված N60 շինթույլտվության հիման վրա 2021թ.-ի մայիսին ապամոնտաժվել են ընկերության կողմից շահագործվող «Մարտունի» ԿՄԿ-ի ցանկապատի որոշ հատվածներ՝ տեղում, առանց սանիտարական նորմերի պահպանմամբ աղբահանության փոխարինման կայան կառուցելու համար, ինչի մասին Ձեզ տեղեկացվել է 12.05.2021թ.-ի ՆՄԾ/12540 գրությամբ:

Բացի այդ, Մարտունի համայնքի գուքը սահմանված կարգով վարձակալության չհանձնելը լուրջ խնդիրներ է առաջացնում նաև համայնքի բաժանորդների հետ փոխհարաբերություններում: Մասնավորապես, «Մարտունի համայնքի Թումանյան 5, բն. 5 հասցեի բնակիչը, հիմք ընդունելով համայնքի խմելու ջրի ջրագծերը և ջրահեռացման կոյուղու համակարգերը սեփականության իրավունքով համայնքապետարանին պատկանելու և այն որևէ այլ կազմակերպության շահագործման չտրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի պարզաբանումը և այն որ նշված հասցեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև կնքված չէ ծառայությունների մատուցման պայմանագիր, հրաժարվում է ծառայությունների դիմաց վճարումից:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի բաժանորդների տվյալների բազայում հաշվառված նշված հասեի բնակչին բազմիցս տեղեկացվել է, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.11.2016թ.-ի N379-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ մինչև «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և բաժանորդի միջև պայմանագրի կնքումն ընկերության կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները մատուցվում են պայմանագրերի օրինակելի ձևերի հիման վրա, եթե բաժանորդը գրավոր չի հրաժարվում նշված ծառայությունների մատուցումից: Բաժանորդի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագիր չկնքելը բաժանորդին չի ազատում գրանցված ծախսի դիմաց առաջացած պարտքը վճարելու պարտավորությունից:

Այսպիսով, վերոնշյալ խնդրի վերջնականապես լուծման և բաժանորդների հետ նման միջադեպերից խուսափելու նպատակով՝ կրկին անգամ խնդրում եմ Ձեր միջնորդությունը Մարտունի համայնքի գույքը լիարժեք «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին հանձնելու, կամ համայնքի հետ մեծածախ ծառայությունների պայմանագիր կնքելու հարցերում:

Հարգանքով՝ Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Կատարող՝
Ժ. Խաչատրյան